



Կապիտալ Ինվեստմենթս

Ի կատարումն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների ընկերությունը հաստատել է «Հաճախորդների բողոք-պահանջների քննության կանոնակարգ», որը սահմանում է Հաճախորդների բողոք-պահանջների ներկայացման, քննության և դրանց վերաբերյալ որոշումների կայացման կանոնները, ինչպես նաև բողոք-պահանջները քննող աշխատակցի իրավունքներն ու պարտականությունները:

ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԲԱՅԱՏՐԱԿԱՆ ԱՄՓՈՓՈԳԻՐ Ուշադրություն

Հարգելի Հաճախորդ, տեղեկացնում ենք, որ Ձեր իրավունքները կարող են պաշտպանվել Մեզ, դատարան, կամ Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու միջոցով:



Մեզ դիմելու դեպքում Ձեր և մեր ընկերության միջև ծագած վեճը լուծվում է Հաճախորդի բողոք-պահանջները քննող աշխատակցի կողմից՝ «Կապիտալ Ինվեստմենթս» փակ բաժնետիրական ընկերության Հաճախորդների բողոք-պահանջների քննության՝ կանոնակարգի պահանջներին համապատասխան:

Կապիտալ Ինվեստմենթս

«Կապիտալ Ինվեստմենթս» ՓԲԸ
Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Մ. Խորենացի 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն, 2-րդ հարկ, գրասենյակ 6
Հեռ. (374 10) 546431 կամ 547431
Ֆաքս: (37410) 547431
Էլ. փոստ: mail@capitalfunds.am
Աշխատանքային ժամեր՝ 9:00 – 18:00



Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու դեպքում Ձեր և «Կապիտալ Ինվեստմենթս» փակ բաժնետիրական ընկերության միջև ծագած վեճը լուծում է Հաշտարարը՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Ֆինանսական համակարգի հաշտարարի ծառայություններն անվճար են:
Բողոք ունենալու դեպքում Դուք նախևառաջ պետք է դիմեք «Կապիտալ Ինվեստմենթս» փակ բաժնետիրական ընկերությանը: «Կապիտալ Ինվեստմենթս» փակ բաժնետիրական ընկերությունը պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել Ձեր բողոքին: «Կապիտալ Ինվեստմենթս» փակ բաժնետիրական ընկերության պատասխանը ստանալուց հետո Դուք կարող եք դիմել դինանսական համակարգի հաշտարարին:
Ֆինանսական համակարգի հաշտարարը չի կարող քննել Ձեր բողոքը, եթե՝

- Ա. Բողոք ներկայացնելուց հետո դեռ չի անցել 10 աշխատանքային օր և Դուք չեք ստացել «Կապիտալ Ինվեստմենթս» փակ բաժնետիրական ընկերության պատասխանը, կամ
- Բ. Դուք չեք պահանջում դրամական կամ այլ գույքային փոխհատուցում, կամ
- Գ. Ձեր կողմից պահանջվող հատուցումը գերազանցում է 10 միլիոն դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը, կամ
- Դ. «Կապիտալ Ինվեստմենթս» փակ բաժնետիրական ընկերության պատասխանը ստանալուց հետո անցել է ավելի քան վեց ամիս, կամ
- Ե. Ձեր կողմից բողոքարկվող գործողությունը կամ անգործությունը տեղի է ունեցել 2008թ.-ի օգոստոսի 2-ից առաջ:

Զգուշացնում ենք նաև, որ Ֆինանսական համակարգի հաշտարարը չի կարող քննել Ձեր բողոքը, եթե այն քննվում է դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի կողմից կամ արդեն իսկ առկա է այդ բողոքի վերաբերյալ դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի վճիռը:

Հաշտարար՝ Փիրուզ Սարգսյան
Հասցե՝ 0010, ք. Երևան, Մովսես Խորենացի փողոց 15,
«Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ
Հեռ.՝ (010) 582-421
Կայք՝ www.fsm.am

Հարգելի Հաճախորդ, հայտնում ենք Ձեզ, որ «Կապիտալ Ինվեստմենթս» փակ բաժնետիրական ընկերությունը չի հրաժարվել Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից: Դա նշանակում է, որ «Կապիտալ Ինվեստմենթս» փակ բաժնետիրական ընկերությունը կարող է որոշ դեպքերում դատական կարգով բողոքարկել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից «Կապիտալ Ինվեստմենթս» փակ բաժնետիրական ընկերության դեմ կայացված որոշումները:



Դուք կարող եք նաև բողոքներով դիմել Կենտրոնական բանկ: Տեղեկացնում ենք, որ Կենտրոնական բանկն իրավասու չէ լուծել Ձեր և Կապիտալ Ինվեստմենթս փակ բաժնետիրական ընկերության միջև վեճերը, սակայն կարող է «Կապիտալ Ինվեստմենթս» փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ կիրառել պատասխանատվության միջոցներ, եթե պարզվի, որ «Կապիտալ Ինվեստմենթս» փակ բաժնետիրական ընկերությունը խախտել է օրենքի պահանջները:

Հասցե՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 6
Հեռ.՝ (010) 592-697
Էլ. հասցե՝ chairman@cba.am
Ֆաքս՝ (010) 565-496
Կայք՝ www.cba.am